ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆԴՊՐՈՑՆԵՐԻՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻԴԱՍԱՎԱՆԴՄԱՆՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴՊՐՈՑ՝ «Սիսիանի հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԹԵՄԱ՝ Ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների Կիրառումը «անգլերեն» առարկայի շրջանակներում

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ, ՄԵՆԹՈՐ՝ Արմինե Մեծրիցյան

ՈՒՍՈՒՑՉԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Լուսինե Մուրադյան

Սիսիան 2023

Բովանդակություն

1. Ներածություն……...3
2. Թեմայի արդիականությունը…….5
3. Ուսուցման ավանդական մեթոդներ……7
4. Ուսուցման փոխներգործուն մեթոդներ……..11
5. Հետազոտության ընթացք……..15
6. Եզրակացություն…….....19
7. Օգտագործված գրականության ցանկ……20

Ներածություն

Մեթոդ հասկացության էությունը: Մեթոդը հունարեն «մեթոդոս» բառն է, որը նշանակում է ուղի, եղանակ։ Ուսուցման մեթոդները բազմաթիվ են ու բազմաբնույթ։ Մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչն իր ուսումնական գործունեության ընթացքում, իրենից անկախ, կիրառում է այնպիսի մեթոդներ ու հնարներ, որոնք նույնիսկ մանկավարժությանը հայտնի չեն (Յու. Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան,Մանկավարժություն, Երևան 2005, էջ 157):

Մանկավարժության մեջ մեթոդը հասկացվում է մի կողմից որպես ուսուցչի, իսկ մյուս կողմից՝ որպես սովորողի գործունեության եղանակ։ Սակայն մանկավարժական գրականության մեջ բազմաթիվ, երբեմն իրարամերժ բնութագրումներ կարող է ունենալ, իբրև՝

- ուսուցչից դեպի աշակերտ գնացող մտքի ճանապարհ,
- սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման հիմքում ընկած տրամաբանական կատեգորիա,
- մանկավարժի և սովորողի՝ ուսուցման նպատակներին ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն,
- ուսուցչի և աշակերտի համագործակցության եղանակ։

Քննարկելով թվարկած և գոյություն ունեցող այլ բնութագրումները՝ ակնհայտ է, որ դժվար է ձևակերպել որևէ ճշգրիտ սահմանում՝ ներկայացնելու համար այնպիսի բարդ և բազմակողմանի հասկացություն, ինչպիսին ուսուցման մեթոդն է: Բայց եթե փորձենք ընդհանուր առմամբ բնութագրել այն, կարող ենք ասել, որ ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար, հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին:

Այլ կերպ ասած՝ մեթոդը փոխազդեցության, փոխգործողության եղանակ է, ուսուցչի և աշակերտի աշխատանքի առանձնահատկությունների արտահայտությունն ուսուցման գործընթացում: Մեթոդը հասկացվում է նաև լայն իմաստով: Օրինակ՝ դիալեկտիկական մատերիալիստական մեթոդը այն հիմնական ուղին է, որը տալիս է բոլոր մեթոդները պրակտիկայում կիրառելու հնարավորություն: Դիալեկտիկական-մատերիալիստական մեթոդը մեթոդաբանական հիմք է բոլոր մեթոդների համար: Այդ մեթոդը կոչվում է նաև ճանաչողական, քանի որ այն ուղղություն է տալիս անձի մտածողությանը:

Գոյություն ունեն ուսուցման մեթոդների դասակարգման բազմաթիվ տարբերակներ, որոնց հիմքում դրվում են հետևյալ հատկանիշները:

- ճանաչողության աղբյուրները (ուսուցման խոսքային, դիտողական, գործնական մեթոդներ),
- տրամաբանական սկզբունքը (ուսուցման վերլուծական-համադրական, ինդուկտիվ-դեդուկտիվ մեթոդներ),
- ուսուցման տիպը (ուսուցման բացատրական-մեկնաբանական, պրոբլեմային-զարգացնող մեթոդներ),
- սովորողների ճանաչողական ինքնուրույնության մակարդակը (ուսուցման վերարտադրողական, պրոդուկտիվ, էվրիստիկ մեթոդներ),
- պրոբլեմայնության մակարդակը (ցուցադրական, մենախոսական, երկխոսական, էվրիստիկ, ծրագրավորված մեթոդներ),
- դիդակտիկ նպատակները և գործառույթները (խթանման, կազմակերպման և վերահսկամն մեթոդներ),
- ուսուցչի գործունեության տեսակը (շարադրման, ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման մեթոդներ) և այլն:

Չնայած ուսուցման մեթոդների դասակարգման հիմունքների այսպիսի բազմազանությանը՝ դրանցից յուրաքանչյուրն արդյունավետ է ուսումնական գործընթացի կազմակերպման որոշակի պայմաններում և որոշակի դիդակտիկ գործառույթների կատարման դեպքում: Պետք է նկատի ունենալ, որ ուսուցման

մեթոդների ինչպես վերը նշված, այնպես էլ գրականության մեջ առկա բազմաթիվ այլ դասակարգումները, որպես կանոն, պայմանական բնույթ ունեն: https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_14.html?spref=fb&m=1

Թեմայի արդիականությունը: Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը կանգնած է մի շարք մարտահրավերների առջև: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Իսկ աշակերտների ուշադրությունը գրավելու համար անհրաժեշտ է ընտրել ուսուցման ճիշտ մեթոդներ: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

Լեզվի դասավանդման պատմության ընթացքում դասավանդողները կիրառել են տարբեր մեթոդներ, պարբերաբար անցում կատարել նորագույն մեթոդների, իսկ ժամանակն ու նոր սերունդների պահանջները հղկել են բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման ձևերը՝ դրանք զուգադրելով ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների առաջարկած հնարավորությունների հետ: Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը լեզուն

ուսուցանողներին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակվել և վերածվել մեթոդների: Մ. Դորշը տարբերակում է լեզվի ձեռքբերում և լեզվի սովորում հասկացությունները /acquisition and learning/: Նա կարծում է, որ լեզվի ձեռքբերումը չգիտակցված գործընթաց է, որի հիմքում անգիր արված բառերն ու արտահայտություններն են, լսողական և տեսողական ընկալումը, ինչպես մայրենի լեզվի դեպքում է: Լեզվի սովորումը ենթադրում է յուրաքանչյուր բառի, արտահայտության, մտքի և խոսքի գիտակցված սովորում, կառուցում և շարադրում /Dorsch, 2011: 2/: Լեզուն սովորողը ուսուցումը սկսում է լեզվական կանոնների և բառապաշարի յուրացումից, դրանք դնում գործածության մեջ՝ որոշակի արդյունքի հասնելու համար: Սակայն կարծում ենք՝ լեզվի ձեռքբերումն ու լեզվի սովորումը փոխկապակցված գործընթացներ են: Ուսուցման որոշակի փուլերում կամ ողջ ընթացքում /հաճախ ֆիլմերից, երգերից/ սովորողի հիշողության մեջ պատկերվում և պահպանվում են բառակապակցություններ, արտահայտություններ և լեզվական կառույցներ, որոնք լեզվական կանոններից «դուրս են», չեն համապատասխանում գրական լեզվի քերականական սահմանումներին, սակայն առօրյա խոսակցական լեզվում լայն տարածում ու կենցաղային գործածություն ունեն, ինչի շնորհիվ էլ լեզվօգտագործման այսպիսի ձևերը ինքնաբերաբար տեղ են գտնում օտար լեզու սովորողի բառապաշարում և գիտակցության մեջ: Բացի այդ, յուրաքանչյուր սովորող լեզվի յուրացման և գործածման որոշակի փուլում նկատում է, որ իր գիտելիքի որոշակի մասը «մեխանիկորեն» է ձեռք բերել:

http://publications.ysu.am/wp-content/uploads/2019/05/19_N_MANUKYAN.pdf

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների

օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»՝ հույսը դնելով խմբի առավել ակտիվ անդամների վրա: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: https://lib.armedu.am/files/resource/files/2022-09-29/b4cdd2f6e89b2343f17b897bc9cbf23e.pdf

Իմ հետազոտական աշխատանքի **նպատակն** է՝ ուսումնասիրել ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառումը «անգլերեն» առարկայի շրջանակներում, որտեղից բխում են հետևյալ **խնդիրները**՝

1. Ուսումնասիրել և ներկայացնել ուսուցման ավանդական մեթոդների առանձնահատկությունները:
2. Ուսումնասիրել և ներկայացնել ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների առանձնահատկությունները:
3. Վերլուծել կիրառվող մեթոդները «անգլերեն» առարկայի շրջանակներում:

Ուսուցման ավանդական մեթոդներ

Ավանդական ուսուցման էությունը: Կրթության ավանդական տեսակն իրականացվում է հիմնականում կրթության դասաժամային համակարգի միջոցով, որը ստեղծվել է մոտ

400 տարի առաջ։Ավանդական կրթությունը բնութագրվում է պարտադիր տարրով. դաս, որը միաժամանակյա գործունեություն է ամբողջ դասարանի հետ։ Միևնույն ժամանակ ուսուցիչը հաղորդակցվում է, փոխանցում գիտելիքը, ձևավորում հմտություններ և կարողություններ՝ հիմնվելով նոր նյութի ներկայացման, աշակերտների կողմից դրա վերարտադրման վրա, գնահատում է այս վերարտադրության արդյունքները։ Ավանդական կրթությունը հիմնականում վերարտադրողական բնույթ ունի։ Ուսուցիչը միակ նախաձեռնողն է։ Ուսուցչի հիմնական ջանքերն ուղղված են կրթական տեղեկատվությունը լավագույնս ներկայացնելուն։ Աշակերտը պետք է ուսուցչին ներկայացնի նաև ուսումնական նյութի սովորած բովանդակությունը։ Ավանդական ուսուցումը պահանջում է փոփոխություններ, որոնք օգնում են հարմարեցնել պայմանները յուրաքանչյուր ուսանողի համար։ Արդիականացման ուղիներից մեկն իր կազմակերպությունում զարգացնող ուսուցման տարրերի ներդրումն է։ Այսինքն՝ կրթական գործունեության ձևավորում, որը ներառում է ուսումնական առաջադրանք, ուսումնական գործունեություն, վերահսկման և գիտելիքների յուրացման աստիճանի գնահատման գործողություններ։ Ավանդական կրթության կատարելագործման մեկ այլ միջոց հիմնված է տեղեկատվության և զարգացման մեթոդների ու կրթության ձևերի ինտեգրման վրա։ Ավանդական կրթության անկասկած առավելությունը կարճ ժամանակում մեծ քանակությամբ տեղեկատվություն փոխանցելու կարողությունն է։ Այն ենթադրում է գիտելիքների յուրացում և վերարտադրություն և դրանց կիրառում նմանատիպ իրավիճակներում։ https://fondeco.ru/hy/osobennosti-metodiki-tradicionnogo-obucheniya-tradicionnye/

Այժմ դիտարկենք օտար լեզվի ուսուցման ավանդական մեթոդները։

Քերականական թարգմանական մեթոդ (The Grammer Translation Method)

Այս մեթոդը մեզ հայտնի է դեռ սովետական ժամանակներից, որը հիմնված է գրավոր թարգմանության և ընթերցանության վրա։ Այս դեպքում սովորաբար կազմվում են տեքստեր, որոնք ուղղված են որոշ քերականական կանոնների մշակմանը։ Հիմքում ընկած են բառուսուցումը, ուղղագրությունը, քերականությունն ու քերականորեն հարուստ տեքստերի գրավոր թարգմանության միջոցով պրակտիկան։

Օտար լեզվի ուսուցման ընթացքում քերականական-թարգմանական մեթոդի կիրառումը սովորողին հնարավորություն է տալիս նախադասություններ կազմելիս իր սովորած «պատրաստի» արտահայտություններն ու բառակապակցությունները «տեղադրել» նախադասության մեջ՝ պարզապես իմանալով տվյալ լեզվի շարադասական առանձնահատկությունները՝ նախադասության անդամների գործածման հերթականությունը խոսքում: Այսինքն, սովորողը յուրացնում և գործածում է «պատրաստի» քերականական ձևերը, ոչ թե առանձին բառերը շարահյուսական համատեքստում:

- **Երկլեզու մեթոդ (Bilingual method)**

Երկլեզու մեթոդը սովորողների մոտ հատկապես զարգացնում է բանավոր թարգմանություն կատարելու հմտությունները, քանի որ ողջ ուսուցման ընթացքում երկու լեզուներն էլ համազոր և հավասարապես «աշխատում են»: Կարելի է ասել, յուրաքանչյուր թեմայի անդրադառնալիս նախ բախվում ենք մայրենի լեզվով այդ թեմայի շուրջ խոսք կառուցելու և զարգացնելու պահանջին:

- **Աուդիո – լեզվական մեթոդ (Audio-lingual method)**

Այս մեթոդի էությունն այն է, որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը:

- **(Proprioceptive method)**

Մեթոդի նպատակն է միաժամանակ աշխատանքի մեջ ներգրավել ուղեղի ճանաչողական, նյարդաբանական և լսողական ֆունկցիաները: Այս մեթոդի կողմնակիցները պնդում են, որ սովորողն ուսուցման ընթացքում պետք է իր լեզուն, բանավոր խոսքն օգտագործի անընդհատ, նույնիսկ գրավոր առաջադրանքներ կատարելիս:
Ֆունկցիոնալ մոտեցում, որտեղ լեզուն որոշակի գործառույթների /ֆունկցիաների/ արտահայտման և իրականացման միջոց է:

- **Ուղղակի մեթոդ (The direct method)**

Նախատեսվում է, որ օտար լեզուն ուսուցանվում է մայրենի լեզվի նման, այսինքն՝ սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է: Մեթոդի գաղափարը օտար լեզվի <<բնական>> յուրացումն է, ինչպես մայրենի լեզվի դեպքում:Ուղիղ մեթոդը օտար լեզվի ուսուցումը նույնացնում է մայրենի լեզվի հետ: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հիմնական շեշտը դրվում է բանավոր հաղորդակցության վրա: Այս դեպքում ամբողջությամբ բացակայում է թարգմանությունը (միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում), բառապաշարը դասավանդվում է նկարներով, պատկերներով, ժեստերով և արտաքին շարժումներով ցուցադրելու և հասկացնելու միջոցով: Ինչպես փոքր երեխան է լսելով սովորում խոսել, կարիքի դեպքում բոլոր հնարավոր մեթոդներով հասկացնում իր մտքերը, «ճարահատյալ» հաղորդակցվում, այնպես էլ լեզուն սովորողը, չունենալով թարգմանելու հնարավորություն, սկսում է հնարավորինս կենտրոնացնել ուշադրությունը՝ ճիշտ ընկալելու, իսկ հիշողությունը՝ ընկալածը մտապահելու և վերարտադրելու համար:

- **Լեզվի իրավիճակային ուսուցում – Բանավոր մոտեցում (Situational language teaching(Oral approach)**

Հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում պրակտիկայում: Այստեղ բանավոր խոսքը իշխում է գրավոր խոսքին և առավելագույն ուշադրություն է դարձվում սխալների վրա, որոնք կարող են թույլ տրվել բանավոր խոսքի ընթացքում:

- **Ուղղորդված պրակտիկա /փորձառություն/ (Directed practice)**

Այս դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները մինչև վերջիններիս մեխանիկորեն անգիր անելը: Այսպես տուժում է սովորողի բառապաշարն

ու լեզվի ճկունությունը, սակայն հասնում ենք լեզվի հիմնային/ բազային/ արտահայտությունների ավտոմատ տիրապետմանը:

Ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներ

Այսօր բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: «Ինտերակտիվ» նշանակում է փոխազդող, համագործակցող («Inter»՝ փոխադարձ, «act»՝ գործողություն): Ինտերակտիվ դասը փոխգործակցություն է ոչ միայն դասավանդողի և սովորողի, այլև հենց իրենց՝ սովորողների միջև, ուսումնական նյութի և սովորողների միջև: Այսպիսով՝ ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցման տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության վրա:

Ինտերակտիվ մեթոդների կիրառումը ինքնանպատակ չէ և հիմնվում է որոշակի աշխարհայացքային զարգացումների վրա: Ստորև ներկայացնենք մի շարք խնդիրներ, որոնք հնարավոր է լուծել ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ: Ակնհայտ է, որ ուսուցման գործընթացը հիմնականում կենտրոնանում է սովորողների բանականության վրա՝ անտեսելով զգայականի կարևորությունը: Այդ պատճառով երեխաներն իրենց զգայական աշխարհը հիմնականում ձևավորում են դպրոցից դուրս: Արդյունքում դասարանում լուրջ բախում է տեղի ունենում զուտ բանականության վրա հիմնվող դպրոցական ծրագրի ու հիմնականում դպրոցից դուրս ձևավորված զգայական աշխարհի միջև: Ժամանակակից ուսուցման մեջ խրախուսվում է փոքր խմբերով համագործակցային աշխատանքը, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում քննարկումների և համագործակցության միջոցով հանգելու փաստարկված եզրակացությունների:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական բնութագրիչներից մեկը ուսուցման համապատասխան միջավայրն է, որտեղ երեխան զգում է իր մասնակցությունը և անձի կարևորությունը, ինչը ուսուցման գործընթացը դարձնում է արդյունավետ: Ինտերակտիվ ուսուցման էությունն այն է, որ բոլոր սովորողները ընդգրկվում են ուսումնառության մեջ: Տեղի է ունենում գիտելիքների փոխանակում: Դասերի ընթացքում

կազմակերպվում են անհատական, խմբային, զույգերով աշխատանք, կիրառվում են հետազոտական ծրագրեր, դերային խաղեր, փաստաթղթեր և սկզբնաղբյուրների հետ աշխատանք, ստեղծագործական գործունեություն և այլն: Ինտերակտիվ ուսուցման կարևոր մաս է կազմում աշխատանքը փոքր խմբերով:

Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել, համատեղ խնդիրներ լուծել: Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտների ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտը ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են

- փոխազդեցությունը, փոխուսուցումը
- սովորողի ակտիվությունը
- համագործակցությունը
- ինքնարտահայտման խրախուսումը
- հետադարձ կապը և այլն:

Ինտերակտիվ մեթոդների կիրառումը չի կարող ինքնանպատակ լինել: Այսինքն բուն նպատակը ոչ թե պարզապես դասն աշխուժացնելն է կամ բաց դասի ընթացքում գործընկերների առջև մանկավարժական վարպետությամբ փայլելը, այլ, առաջին հերթին մեթոդական ողջ զիանոցի կիրառմամբ ուսուցման նպատակների իրականացմանը հասնելը:

Այժմ դիտարկենք անգլերենում կիրառվող ինտերակտիվ մեթոդներից մի քանիսը, որի պարագայում լեզուն սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման գործիք է:

- **Learning Through Discussion (LTD) method (Սովորել քննարկման միջոցով)**

Քննարկման մեթոդը ամենատարածված փոխներգործուն մեթոդն է: Այն հիմնականում դրսևորվում է խմբային աշխատանքներում: Նպաստում է հաղորդակցական հմտությունների զարգացմանը, ապահովում սովորողների ամբողջական ներգրավածությունը դասին: Սովորողներին թեման ներկայացվում է կարդալու, լսելու և ձայնագրության միջոցով, այնուհետև նրանք բաժանվում են զույգերի կամ խմբերի՝ լուծումներ գտնելու, կարծիքներ և գաղափարներ կիսելու համար: Այս դեպքում սովորողները քննարկման ընթացքում գիտեն իրենց հստակ դերը: Քննարկման մեթոդը սովորողներին հնարավորություն է ընձեռում ուշադրությամբ լսել միմյանց փաստարկներն ու հակափաստարկները, կիրառել ուսումնասիրվող լեզուն և ավելի լավ ճանաչել իրար(William Fawcett Hill's, Learning Through Discussion,Third Edition, London, copyright by JeromeRabow):

- **Projects (նախագծերի մեթոդ)**

Նախագծերի մեթոդի հիմքում ընկած է սովորողների ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն կառուցելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու կարողությունների և քննադատական մտածողության զարգացումը: Նախագծերի մեթոդը միշտ ենթադրում է որոշակի խնդրի լուծում, որը նախատեսում է մի կողմից ուսուցման բազմազան մեթոդների և միջոցների կիրառում, մյուս կողմից գիտության և տեխնոլոգիայի ստեղծագործական աշխատանքի տարրեր(Նոր մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաներ, Ե. Ս. Փոլատի խմբագրություն, Մոսկվա, 1999, էջ56-57):

- **Հաղորդակցական մեթոդ (Communicative method)**

Հաղորդակցական մեթոդը, կարելի է ասել, երկլեզու և ուղիղ մեթոդների համադրումն է: Այստեղ նպատակը հաղորդակցական հմտություններ զարգացնել է, ոչ թե լեզվի կառուցվածքային գիտելիքները: Ինչպես երեխան է լսելով և կրկնելով սկսում խոսել՝ առանց հասկանալու քերականական կառուցվածքի առանձնահատկություններն ու նրբությունները, այնպես էլ սովորողն է հիմնականում առանց նշումների, միայն լսելով և խոսելով յուրացնում լեզուն:

- **Դերային խաղերի մեթոդ (role play method)**

Խոսքային հմտությունների զարգացման համար կարևոր նշանակություն ունի <<դերային խաղեր>> մեթոդը: Սովորողները ստանձնում են տարբեր սոցիալական դերեր: Դերային խաղերը գործողության տեսակ են, որի մասնակիցները գործում են ընտրված դերերի շրջանակներում, ղեկավարվում են ընտրված դերի միջավայրի տրամաբանությամբ և գործում են արդեն եղած սյուժեով կամ հենց իրենք են ստեղծում սյուժեն: Այսինքն, դերային խաղն իրենից ներկայացնում է մեկ կամ մի խումբ անձանց կողմից որոշակի իրադրության խաղային մոդելավորում:

- **Մտագրոհ (brainstorming)**

Մտագրոհը խմբի անդամների միջև մտքերի փոխանակման ընթացքում գաղափարների ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է: Մինչ դասանյութին անցնելը ուսուցիչը որոշակի ժամանակում անհատապես կամ զույգերով կազմել է տալիս իրենց իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ(Teaching by Principles, An Interactive Approach to Language Pedagogy, 4th Edition):

- **Խճանկար(Jigsaw)**

«Խճանկար կամ Ջիգսո» մեթոդը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ աշակերտները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի դրույթների և որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները: Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և՝ սովորողի, և՝ սովորեցնողի դերերում:

https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%B3%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80_%D5%AF%D5%A1%D5%B4_%D5%8B%D5%AB%D5%A3%D5%BD%D5%B8

Հետազոտության ընթացք

Տվյալների մշակում և վերլուծություն

Յուրաքանչյուր մեթոդի կիրառման դեպքում առանցքային կարևորություն ունի ուսուցման ժամանակացույցի մեջ նյութի ճիշտ բաշխումը: Թե՛ դասավանդողը, թե՛ սովորողը նախապես պետք է համաձայնության գան տվյալ դասընթացից ակնկալվող արդյունքների շուրջ: Դասավանդողը պետք է տեղեկացնի սովորողին, թե տվյալ ժամանակահատվածում, ինչպիսին կարող է լինել այն առավելագույն արդյունքը, որը հնարավոր է գրանցել, և երկուստեք պետք է փոխադարձաբար հետևողական լինեն գիտելիք տալու և ստանալու հարցում: Որոշ մեթոդներ միտված են զարգացնելու լեզվի ուսուցման բոլոր հմտությունները՝ լսել, խոսել, գրել, կարդալ, իսկ մյուսները շեշտը դնում են կոնկրետ հմտությունների վրա: Մեթոդի ընտրության հարցում կարևոր է նաև հաշվի առնել՝ արդյոք դասընթացն անհատական է, թե՝ խմբակային, ինչ ունակություններ և գիտելիքների բազա ունի սովորողը և այլն(ՕՏԱՐԼԵԶՈՒՆԵՐԸԲԱՐՁՐԱԳՈՒՅՆԴՊՐՈՑՈՒՄ 2019, 1 (26)):

Իմ հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառումը «անգլերեն» առարկայի դասաժամերին, պարզել դրանց արդյունավետությունը: Ենթադրում եմ, որ յուրաքանչյուր մեթոդի կիրառման արդյունավետությունը մեծապես կախված է դասարանի տիպից, դասի թեմայից և առանձնահատկություններից:

Հետազոտությունն անցկացրել եմ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի հ. 2 հիմնական դպրոցում համատեղ դասավանդման և աջակցման գործընթացում:

8-րդ դասարանում անցկացրել ենք քերականական դաս <<The Past Perfect>>թեմայով թիմային դասավանդման մոդելով: Դասապրոցեսն անցել է երկլեզու մեթոդի (Bilingual method) կիրառմամբ: Խթանման փուլում մտագրոհի (brainstorming) միջոցով փորձել ենք վերհիշել անցյալ անորոշ (Simple Past) ժամանակաձևը: Սովորողները նշեցին, թե ինչպիսի գործողություն է այն ցույց տալիս և բացատրեցին կազմության ձևը՝ այն գրելով

գրատախտակին: Այնուհետև իմաստի ընկալման փուլում սահուն կերպով անդրադարձ կատարվեց անցյալ վաղակատար (The Past Perfect) ժամանակաձևին: Բացատրվեց՝ ինչպիսի գործողություն է այն ցույց տալիս՝ նշելով այս ժամանակաձևի հետ հաճախ գործածվող կապակցությունները (by six o'clock yesterday, by the end of last month/year),

Tense	Signalwords	Use	Examples affirmative	Examples negative	Examples interrogative
Simple Past	Last year/month,	Action took place in the past,	I worked	I didn't work	Did I work? Did

ներկայացվեց կազմության ձևը, ինչպես նաև մեկ նախադասության օրինակ (He had done his homework by six o'clock yesterday): Ստորև ներկայացված աղյուսակի միջոցով բացատրվեց Simple Past և Past Perfect ժամանակաձևերի կիրառման և կազմության տարբերությունները (աղյուսակը կազմել եմ ինքս՝ որպես դասապրոցեսին աջակցող):

	....ago, in 1990, yesterday	mostly connected with an expression of time	He worked I went He went	He didn't work I didn't go He didn't go	he work? Did I go? Did he go?
Past Perfect	Already, never, before last September, until that moment	Action took place once or many times before another point in the past.	I had worked He had worked I had went He had went	I hadn't worked He hadn't worked I hadn't gone He hadn't gone	Had I worked ?Hadhe worked? Had I gone? Had he gone?

Այսպիսով՝ համադրման և հակադրման միջոցով սովորողները լիովին ընկալեցին ներկայացվող քերականական կանոնը:

Կշռադատման փուլում կատարեցինք վարժություն խաղի մեթոդով: Աշակերտները բաժանվեցին երկու խմբի: A խումբը հարց ուղղեց Past Simple ժամանակի գործածությամբ, իսկ B խումբը պատասխանեց՝ կիրառելով Past Perfect ժամանակը:



Թիմային դասավանդման մոդելով 3-րդ դասարանում <<Jim Brown>> թեման ուսուցանելիս կիրառվել է ուսուցման և՛ ավանդական, և՛ փոխներգործուն մեթոդներ: Ողջ դասապրոցեսն անցել է ուղղակի մեթոդի (The direct method) միջոցով: Խթանման փուլում կիրառել եմ մտագրոհ (brainstorming) մեթոդը, որի ընթացքում թեմային առնչվող հարցադրումների միջոցով սովորողներին նախապատրաստել եմ դասին: Իմաստի ընկալման փուլում կիրառել եմ քերականական թարգմանական մեթոդը (The Grammer Translation Method): Յուրաքանչյուր աշակերտից պահանջվել է կարդալ մեկական նախադասություն՝ փորձելով այն թարգմանել՝ մեծապես ուշադրություն դարձնելով բառերի ճիշտ արտասանությանը (այս գործընթացում սովորողները վերհիշում են անցած քերականական կանոնները, միաժամանակ զարգանում է ընթերցանության կարողությունները): Այնուհետև կատարել ենք վարժություն, որտեղ տեքստն ամբողջությամբ կրկնվում է, բայց նախադասություններում որոշ բառեր բացակայում են, և աշակերտները պետք է դրանք գտնեն ու տեղադրեն: Կշռադատման փուլում կիրառվել է երկխոսության (Dialogue) մեթոդը, որը իրականացվել է զույգեր կազմելու միջոցով: Երկխոսության թեման ընտրվել է դասի համատեքստում հարց ու պատասխանի ձևաչափով: Խոսքային գործունեության այս ձևը հնարավորություն տվեց աշակերտներին կիրառել <<Simple Present>>ժամանակաձը, ինչպես նաև տեքստում առկա նոր բառերը: Կից ներկայացնում եմ իմ կողմից կիրառվող երկխոսության օրինակներ:

Speaker1: What is your mother's name?

Speaker 2: My mother's name is Narineh.

Speaker 1: Does she work?

Speaker2: No, she doesn't. She is a housewife.

Speaker1: What is your brother's name?

Speaker 2: My brother's name is Ashot.

Speaker 1: Is he a schoolboy?

Speaker2: No, he doesn't. He doesn't go to school.

Դաս-միջոցառում 3-րդ դասարանում:Դասի նպատակն է ամփոփել գիտելիքները ողջ տարվա ընթացքում անցած թեմաների շուրջ: Հատկապես ակնհայտ է կապը <<Երգ-

երաժշտություն>> առարկայի հետ: Միջոցառմանը պատրաստվելիս աջակցել եմ ուսուցչին՝ աշակերտներին սովորեցնելով թեմատիկ երգեր(<<ABC song>>, <<If You Are Happy>>, <<Finger Family Song>>, <<Colour Finger Family song>>…): Կիրառել ենք <<դերային խաղ>> մեթոդը՝ ներկայացնելով փոքրիկ բեմադրություն <<Lazy Mery>>երգի միջոցով: Ողջ միջոցառումն անցկացվում է ինտերակտիվ եղանակով:

Միջոցառումն սկսվում է ողջույնի խոսքերով (Good morning, good morning....): Սովորողներին հարց եմ ուղղում՝ արդյոք պատրաստ են սկսելու մեր <<ճամփորդությունը>>: Այսպիսով ներկաները <<գնացքով>> տեղափոխվում են տառերի աշխարհ, որը կոչվում է <<ABC City>>: Յուրաքանչյուրը ներկայացնում է իր տառը:Կանգ առնելով <<թվերի կայարանում>>՝ աշակերտները երգելով հաշվում են մեկից տասը: <<Գույների կայարանում>> նունպես երգելով հարց ու պատասխանի միջոցով ներկայացնում են գույները: Այնուհետև կանգ առնելով <<ընտանիքի կայարանում>>՝ երգի միջոցով ներկայանում են ընտանիքի անդամների դերերում: Ընթացքում աշակերտները արտասանում են փոքրիկ բանաստեղծություններ՝ ներկայացնելով իրենց լեզվական հմտությունները:

Եզրակացություն

Ուսուցման մեթոդները կիրառելիս՝ լինի ավանդական, թե նորարարական, պետք է հաշվի առնել թեմայի առանձնահատկությունները, աշակերտների զարգացվածության աստիճանը, ընդունակությունները, դասի տիպը: Կան թեմաներ, որոնք հնարավորություն են տալիս միանգամից կիրառել մի քանի մեթոդ: Հետազոտության ընթացքը հաստատեց այն համոզմունքը, որ ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հետևաբար՝ կարելի է խելամիտ համադրման արդյունքում ստանալ բարձր արդյունք:

Լսելով մասնագետների կարծիքներ և ինքներս դասավանդելով՝ կարծում ենք, որ որքան էլ մեթոդները մշակվում, թրծվում, հղկվում, լրացվում և կատարելագործվում են

ժամանակի և սերունդների հետ, որքան էլ իրենց տեսակի մեջ արդյունավետություն են գրանցում, միևնույն է, յուրաքանչյուր հմուտ մասնագետ ուսուցման ընթացքում կիրառելով որևէ մեթոդ, որոշ տարրեր, նրբություններ և մոտեցումներ «ներմուծում է» նաև այլ մեթոդներից և իր սեփական դասավանդման պրակտիկայից:

Նշեմ նաև, որ նորարարական մեթոդների կիրառման համար կարևոր նշանակություն ունի դասարաններում նյութատեխնիկական հագեցվածությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան 2005, էջ 157
2. https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_14.html?spref=fb&m=1
3. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf
4. http://publications.ysu.am/wp-content/uploads/2019/05/19_N_MANUKYAN.pdf
5. https://lib.armedu.am/files/resource/files/2022-09-29/b4cdd2f6e89b2343f17b897bc9cbf23e.pdf
6. https://fondeco.ru/hy/osobennosti-metodiki-tradicionnogo-obucheniya-tradicionnye/
7. William Fawcett Hill's, Learning Through Discussion,Third Edition, London, copyright by JeromeRabow
8. Նոր մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաներ, Ե. Ս. Փոլատի խմբագրություն, Մոսկվա, 1999, էջ56-57:

9. Teaching by Principles, An Interactive Approach to Language Pedagogy, 4th Edition
10. ՕՏԱՐԼԵԶՈՒՆԵՐԸԲԱՐՁՐԱԳՈՒՅՆԴՊՐՈՑՈՒՄ 2019, 1 (26)